ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2022

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 7

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1 **Օգտվելով քարտեզագրական հետազոտության մեթոդից՝ քարոլորտի սալերի տեղաշարժերի տեսությունը մշակեց.**

1) Վ. Դոկուչաևը
2) Օ. Շմիդտը
3) Ա. Հումբոլդտը
4) Ա. Վեգենները

2 **Լիալուսինը կեսգիշերին երևում է.**

1) հարավում
2) արևմուտքում
3) արևելքում
4) հյուսիսում

3 **Որքա՞ն է հարավարևմտյան կողմի ազիմուտը:**

1) 270°
2) 315°
3) 135°
4) 225°

4 **Նկարում 1-ում ի՞նչ պրոյեկցիա է պատկերված:**

1) գլանային
2) կոնային
3) հասարակածային
4) ազիմուտային

Նկար 1

5 **Երկու կետերի իրական հեռավորությունը 48 կմ է: 1 : 800 000 մասշտաբի քարտեզում նրանց հեռավորությունը կլինի.**

1) 60 սմ
2) 600 սմ
3) 0,6 սմ
4) 6 սմ

6 **Ո՞ր պնդումն է ճիշտ:**

1) Հասարակածում ցերեկվա տևողությունը ամենաերկարը մարտի 21-ին և սեպտեմբերի 23-ին է:
2) Հասարակածում ամբողջ տարվա ընթացքում գիշերվա ու ցերեկվա տևողություններն իրար հավասար են:
3) Հասարակածում ցերեկվա տևողությունը ամենաերկարը հունիսի 22-ին է:
4) Հասարակածում ցերեկվա տևողությունը ամենաերկարը դեկտեմբերի 22-ին է:

7 **Նկար 2-ում ո՞ր տառով է նշված երկրագնդի ներքին միջուկը:**

1) Գ
2) Դ
3) Ա
4) Բ



նկար 2

8 **Նկար 3-ում ի՞նչ է պատկերված:**



նկար 3

1) պլատֆորմ
2) գեոսինկլինալ
3) հորստ
4) գրաբեն

9 **12 ամիսների օդի միջին ջերմաստիճանների գումարը բաժանելով տարվա ամիսների քանակի վրա՝ կարելի է որոշել օդի.**

1) ջերմաստիճանի լայնույթը
2) միջին ամսական ջերմաստիճանը
3) առավելագույն ջերմաստիճանը
4) միջին տարեկան ջերմաստիճանը

10 **Ընտրել կլիմայի բնորոշ գծերի և կլիմայի տիպերի համապատասխանությունների ճիշտ շարքը.**

1. ջերմաստիճանի մեծ տատանումներ և տարվա ընթացքում անհավասարաչափ բաշխված քիչ տեղումներ
2. ջերմաստիճանի փոքր տատանումներ և ամբողջ տարին թափվող առատ տեղումներ
3. մեղմ ու խոնավ ձմեռներ և տաք ու չոր ամառներ
4. ցուրտ ու չոր ձմեռներ և տաք ու խոնավ ամառներ

ա.ծովային կլիմա
բ.մուսսոնային կլիմա
գ. ցամաքային կլիմա
դ. միջերկրածովային

1) 1-գ, 2-ա, 3-դ, 4-բ
2) 1-բ, 2-գ, 3-ա, 4-դ
3) 1-բ, 2-գ, 3-դ, 4-ա
4) 1-գ, 2-ա, 3-բ, 4-դ

11 **Օվկիանոսի առափնյա գոտում մինչև 200մ խորությամբ տեղամասը կոչվում է.**

1) մայրցամաքային լանջ
2) ցածրավայր
3) մայրցամաքային ծանծաղուտ
4) փողրակ

12 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Լեռնային շրջաններում գետերի ջրբաժանն անցնում է լեռնաշղթաների ստորոտի ամենացածր մասով:
2) Տարվա ընթացքում գետի ջրի մակարդակի տատանումները կոչվում է գետի տարեկան հոսք:
3) Ամեն տարի՝ նույն սեզոնին, գետի ջրի քանակի ավելացման երևույթը կոչվում է ծախս:
4) Գետի թեքությունը գետի անկման հարաբերությունն է նրա երկարությանը:

13 **Տարվա ընթացքում ո՞ր լճերի մակերեսն է զգալիորեն փոխվում.**

1) Էրի և Օնեգա
2) Էյր և Չադ
3) Բայկալ և Բալխաշ
4) Վերին և Նյասա

14 **Բնական համալիրներից ո՞րն է աչքի ընկնում հողի առավել բարձր բերրիությամբ.**

1) անապատը
2) տափաստանը
3) տայգան
4) տունդրան

15 **«Բնական զոնա-բնորոշ բուսատեսակ» զույգերից ընտրել ճիշտը.**

1) փշատերև անտառ- հաճարենի, դափնի
2) սավաննա-շագանակենի, բոխի
3) մերձարևադարձային կոշտատերև անտառ-խցանակաղնի, քարակաղնի
4) խոնավ մերձարևադարձային անտառ-բառբաբ, շշաձառ

16 **Ո՞ր պնդումն է *սխալ*.**

1) Միջին դարաշրջանում երկրագնդի կլիման շոգ ու խոնավ էր, որի շնորհիվ աճում էին փարթամ անտառներ։
2) Գոնդվանա հնագույն մայրցամաքը մասնատվել է հին՝ պալեոզոյան դարաշրջանի վերջերին։
3) Եվրասիա մայրցամաքն ամբողջությամբ Լավրասիա հնագույն մայրցամաքի մասն է։
4) Նոր դարաշրջանի վերջում կլիման զգալիորեն ցրտել է, և երկրագնդի հյուսիսային շրջանները սառցապատվել են։

17 **Ո՞ր պնդումն է *սխալ*.**

1) Աշխարհագրական թաղանթի շատ երևույթներ միասնական են և փոխպայմանավորված։
2) Աշխարհագրական թաղանթում տեղի է ունենում նյութերի և էներգիայի շրջապտույտ։
3) Աշխարհագրական թաղանթում տեղի ունեցող երևույթներն ու գործընթացները չեն կրկնվում։
4) Աշխարհագրական թաղանթի շատ երևույթներ ունեն գոտիական և զոնայական տարածում։

18 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Գաղութային անցյալը չի ազդել Աֆրիկայի երկրների սահմանների գծագրության ձևավորման վրա։
2) Պետական սահմանի անցկացումը կատարվում է 2 փուլով՝ սահմանարկման և սահմանագծման։
3) Պետության տարածքի ձևը չի ազդում տրանսպորտային ցանցի գծագրության, տարաբնակեցման բնույթի վրա։
4) Տարածքի մեծությունը քաղաքաաշխարհագրական գործոն չէ։

19 **«Սահմանակից երկրներ-լեռներ» զուգորդումներից ընտրել *սխալը*.**

1) Չինաստան-Հնդկաստան-Ալպեր
2) Արգենտինա-Չիլի-Անդեր
3) Ռուսաստան-Վրաստան-Մեծ Կովկաս
4) Ֆրանսիա-Իսպանիա-Պիրենեյներ

20 **Խաղաղօվկիանոսյան երկրներ են.**

1) Ճապոնիան և Ֆիլիպինները
2) Հունաստանը և Բուլղարիան
3) Նորվեգիան և Լյուքսեմբուրգը
4) Վրաստանը և Թուրքմենստանը

21 **Էքսկլավ է.**

1) Սվազիլենդը
2) Սան Մարինոն
3) Լեսոտոն
4) Ալյասկան

22 **Ո՞ր պնդումն է *սխալ*.**

1) Զարգացած երկրներում՝ բնակչության սեռային կազմում, կանանց թիվը գերազանցում է տղամարդկանց թվին։
2) Եվրոպական երկրներում ձևավորվել է բնակչության վերարտադրության առաջին տիպը։
3) Երբ ծնելիությունը հավասար է մահացությանը, վերարտադրությունը կոչվում է պարզ։
4) Զարգացող երկրներին բնորոշ է նեղ հիմքով, համեմատաբար լայն գագաթով սեռատարիքային բուրգ։

23 **Նոսր բնակեցված երկրներ են.**

1) Ինդոնեզիան և Ճապոնիան
2) Հայաստանը և Վրաստանը
3) Ավստրալիան և Կանադան
4) Գերմանիան և Ֆրանսիան

24 **Այն երևույթը, երբ ամրապնդվում է ազգի լեզվական և մշակութային ընդհանրությունը, և ազգը դառնում է ավելի միասնական և ամրակուռ, կոչվում է.**

1) ուրբանիզացիա
2) ասիմիլյացիա
3) ագլոմերացիա
4) կոնսոլիդացիա

25 **Համաշխարհային էլեկտրաէներգիայի արտադրության կառուցվածքում ամենամեծ բաժինն ունեն.**

1) աէկերը
2) մէկերը
3) ջէկերը
4) ջրէկերը

26 **Մեքենաշինության տեղաբաշխման սկզբունք չէ.**

1) տեղաբաշխումը խիտ բնակեցված վայրերում
2) տեղաբաշխումը գիտական կենտրոնների մոտ
3) տեղաբաշխումը վառելիքային բազաների մոտ
4) տեղաբաշխումը սպառման վայրերի մոտ

27 **Որոշել եգիպտացորենի ցանքատարածությունների մակերեսը, եթե եգիպտացորենի համախառն բերքը 12000 տ է, իսկ միջին բերքատվությունը՝ 30ց/հա.**

1) 36 կմ^2
2) 42 կմ^2
3) 60 կմ^2
4) 40 կմ^2

28 **Բնութագրումով որոշել լիճը.**

Ամուդարյա և Սիրդարյա գետերը թափվում են մնացորդային ծագման այդ լճի մեջ: Այդ գետերի ջրերը ոռոգման նպատակով օգտագործելու պատճառով լիճը ծանծաղել է: Ո՞ր լիճն է:

1) Բայկալ
2) Արալյան
3) Բալխաշ
4) Կասպից

29 **Ո՞ր պնդումն է ճիշտ**

1) Եվրասիայի ամենամեծ հարթավայրը Մեծ Չինականն է։
2) Եվրասիայի արևելյան և հարավարևելյան շրջաններում շատ են գործող հրաբուխները։
3) Եվրասիայի ամենացածր կետը Մերձկասպյան ցածրավայրում է։
4) Եվրասիայի տարածքի մեծ մասը պատկանում է Եվրոպային, իսկ փոքր մասը՝ Ասիային։

30 **Աֆրիկայի մերձհասարակածային գոտիներում ամառային սեզոնին տեղումների քանակը կազմում է.**

1) 250-300 մմ
2) 1800-2000 մմ
3) 500-600 մմ
4) 1500-1600 մմ

31 **Ո՞ր շարքում *սխալ* կա։**

1) Դրակոնյան, Կապի
2) Բենգալյան, Կարմիր
3) Ասսալի, Քաթթարայի
4) Տանգանիկա, Նյասա

32 **Ո՞ր պնդումն է *սխալ*.**

1) Բերինգի նեղուցով են միանում Չուկուտյան և Բերինգի ծովերը։
2) Բերինգի նեղուցով են միանում Խաղաղ և Հյուսիսային սառուցյալ օվկիանոսները
3) Բերինգի նեղուցով Հյուսիսային Ամերիկան բաժանվում է Եվրասիայից։
4) Բերինգի նեղուցով Չուկոտյան թերակղզին բաժանվում է Լաբրադոր թերակղզուց։

33 **Ո՞ր պնդումն է *սխալ*.**

1) Ֆլորիդա թերակղզին արևադարձային գոտում է։
2) Նյուֆաունդլենդ կղզին բարեխառն գոտում է։
3) Ալյասկա թերակղզին բարեխառն գոտում է։
4) Յուկատան թերակղզին մերձհասարակածային գոտում է։

34 **Ավստրալիայում ի՞նչ լեռներ կան։**

1) Ավստրալական Ալպեր
2) Ավստրալական Հիմալայներ
3) Ավստրալական Անդեր
4) Ավստրալական Կարպատներ

քարտեզ 1



35 **Քարտեզ 1-ի վրա ո՞ր տառով է նշված Լա Պլատայի դաշտավայրը։**

1) Ա
2) Բ
3) Զ
4) Է

36 **Քարտեզ 1-ի վրա ո՞ր տառով է նշված Օրինոկո գետը։**

1) Գ
2) Ը
3) Դ
4) Ե

37 **Ռուսաստանի Դաշնության վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Ածխի արդյունահանման խոշոր ավազաններից է Կուզբասը։
2) Ոսկու պաշարների հիմնական մասը տեղաբաշխված է երկրի եվրոպական մասում։
3) Նավթի պաշարներով ու արդյունահանմամբ աշխարհում գրավում է առաջին տեղը։
4) Էլեկտրաէներգիայի մեծ մասն արտադրվում է ջրային էլեկտրակայաններում։

38 **Մեծ Բրիտանիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Մայրցամաքից բաժանված է Ջիբրալթարի նեղուցով։
2) Հյուսիսային ծովի ծանծաղուտից արդյունահանում է նավթ ու բնական գազ։
3) Աշխարհի առավել անտառապատ երկրներից է։
4) Կլիման բարեխառն ցամաքային է։

39 **Իտալիային պատկանող կղզի է.**

1) Կորսիկան
2) Մալթան
3) Կրետեն
4) Սիցիլիան

40 **Տրված զույգ քաղաքներից Ֆրանսիայում են.**

1) Թուրինը և Բիրմինգհեմը
2) Դյուսելդորֆը և Լիլը
3) Լյուքսեմբուրգը և Մյունխենը
4) Լիոնը և Մարսելը

41 **Դեպի Միջերկրական ծով ելք *չունեցող* պետություն է.**

1) Լիբանանը
2) Սիրիան
3) Իսրայելը
4) Իրաքը

42 **Հնդկաստանի վերաբերյալ ո՞ր պնդումն է *սխալ:***

1) Գյուղատնտեսության առաջատար ճյուղն անասնաբուծությունն է:
2) Ծանր արդյունաբերության առաջատար ճյուղերից է սև մետաղաձուլությունը:
3) Հինդուստան թերակղզու կենտրոնական մասում է տարածվում Դեկանի սարահարթը:
4) Ընդերքը հարուստ է երկաթի և քարածխի պաշարներով:

43 **Աֆրիկայի վերաբերյալ ո՞ր պնդումն է *սխալ*.**

1) Հյուսիսում արդյունաբերական խոշորագույն շրջանը պղնձի գոտին է:
2) Տրանսպորտի զարգացման մակարդակով աշխարհում գրավում է վերջին տեղը:
3) Գյուղատնտեսությունը բազմատնտեսաձև է:
4) Համեմատաբար լավ է զարգացած հանքարդյունաբերությունը:



քարտեզ 2

44 **Քարտեզ 2–ում Արարատի մարզը ո՞ր տառով է նշված.**

1) Դ
2) Ը
3) Է
4) Գ

45 **Քարտեզ 2–ում Աժդահակ լեռնագագաթը ո՞ր տառով է նշված.**

1) Բ
2) Ե
3) Զ
4) Ա

46 **Ո՞ր շարքի միջլեռնային գոգավորություններն են տրված ըստ բարձրությունների աճման.**

1) Մշո, Բալահովտի, Խարբերդի
2) Դերջանի, Երզնկայի, Կամախի
3) Մշո, Մանազկերտի, Ալաշկերտի
4) Երզնկայի, Կարնո, Նախիջևանի

47 **ՀՀ –ի վերաբերյալ ո՞ր պնդումն է *սխալ*.**

1) Սարահարթերի ցածրադիր մասերում և միջլեռնային գոգավորություններում գյուղերն ունեն հոծ դասավորություն և առաջացնում են համատարած գյուղական տարաբնակեցում:
2) Լեռնային շրջաններում գյուղերը երբեմն դասավորված են գետահովիտների հատակային մասերով անցնող երկաթուղիների կամ ավտոխճուղիների երկայնքով:
3) Բարձրալեռնային գյուղերից դեպի քաղաքներ և ցածրադիր բնակավայրեր կատարվող բնակչության արտահոսքի արդյունքում բազմաթիվ գյուղեր վերացել են:
4) Գյուղական բնակավայրերի միջին մարդաշատությունը վերջին տարիներին նվազել է:

48 **Ոչ գյուղատնտեսական հումքի վրա հիմնված ՀՀ սննդի արդյունաբերության ճյուղ է.**

1) հանքային ջրերի արտադրությունը
2) պանրագործությունը
3) պահածոների արտադրությունը
4) գինեգործությունը

49 **ՀՀ ո՞ր մարզի տարածքի զգալի մասն է ընկած Փամբակ և Զորագետ գետերի ավազաններում.**

1) Լոռու
2) Տավուշ
3) Շիրակի
4) Կոտայքի

50 **ԼՂՀ (Արցախի Հանրապետություն) անտառային գոտուն բնորոշ կենդանատեսակներ են.**

1) օձն ու մողեսը
2) բեզոարյան այծը և գայլը
3) կրիան և ոզնին
4) գորշ արջն ու լուսանը

51 **Տրվածներից ո՞րն է նպաստում մթնոլորտի մաքրության պահպանմանը.**

1) կանաչապատ տարածքների ավելացումը
2) ասֆալտապատ տարածքների ընդարձակումը
3) անտառների հատումը
4) ցեմենտի արտադրության ավելացումը

52 **«Բնական ռեսուրս – վերականգնման հատկություն» զույգերից ընտրել ճիշտը.**

1) երկրաջերմային ռեսուրս – անսպառ
2) նավթային ռեսուրս – սպառվող - վերականգնվող
3) կենսաբանական ռեսուրս - անսպառ
4) կլիմայական ռեսուրս – սպառվող-վերականգնվող

53 **Ջրավազաններն աղտոտող արհեստական նյութերից են.**

1) գեյզերների ջրերում լուծված նյութերը
2) քիմիական պարարտանյութերը
3) ապարների քիմիական հողմահարման հետևանքով առաջացած նյութերը
4) հարթավայրային գետերով տեղափոխվող փայտանյութերը

54 **Հողերի էրոզիայի առաջացման պատճառներից է.**

1) արոտավայրերի գերարածեցումը
2) տնկարկների ոռոգումը
3) խոտհարքների օգտագործումը
4) վարելահողերի մշակումը

55 **Ո՞ր պնդումն է ճիշտ**

1) Տարածքային վեճերը երբեք խաղաղ ճանապարհով չեն լուծվում:
2) Եվրոպայում այլևս վիճելի տարածքներ գոյություն չունեն:
3) Գլոբալացումը երկրների և ժողովուրդների ազատ ինքնորոշման և սեփական ինքնության հաստատման երևույթն է:
4) Տարածքային հակամարտություններն, ըստ իրենց բնույթի, լինում են միջպետական և ներպետական:

56 **Գրել Մեծ Անտիլյան կղզեխմբին պատկանող կղզիների համարները:**

1) Վիկտորիա
2) Պուերտո-Ռիկո
3) Կուբա
4) Սարդինիա
5) Գրենլանդիա
6) Հաիթի
7) Վանկուվեր
8) Ճամայկա

57 **Գրել այն մայրաքաղաքների համարները, որոնք իրենց երկրի ամենախոշոր քաղաքը *չեն*.**

1) Կահիրե
2) Բեյրութ
3) Բեյջին
4) Մինսկ
5) Թեհրան
6) Կիև
7) Անկարա
8) Բոգոտա

58 **Գրել այն երկրների համարները, որոնք տարածքով գերխոշոր են.**

1) Պակիստան
2) Թուրքիա
3) Կանադա
4) Ճապոնիա
5) Բրազիլիա
6) Գերմանիա
7) Ուկրաինա
8) Նիգերիա

59 **Գրել այն երկրների համարները, որոնք հանրապետություններ են.**

1) Եգիպտոս
2) Իսպանիա
3) Ֆինլանդիա
4) Ճապոնիա
5) Շվեդիա
6) Լատվիա
7) Դանիա
8) Մեծ Բրիտանիա

60 **Գրել այն երկրների համարները, որոնց բնորոշ է «ժողովրդագրական ճգնաժամը».**

1) Սիրիա
2) Եմեն
3) ԱՄՆ
4) Կանադա
5) Ուկրաինա
6) Թուրքիա
7) Իրան
8) Լատվիա

61 Գրել բազմամետաղային հանքավայրերի համարները.

1) Մեղրաձորի
2) Հրազդանի
3) Աբովյանի
4) Թեժ լեռան
5) Շահումյանի
6) Սոթքի
7) Ախթալայի
8) Սվարանցի

62 Տրված են Հայկական լեռնաշխարհի երեք խոշոր լճերը: Դասավորել դրանց համարները լճերի մակերեսների աճման կարգով:

1) Ուրմիա 2) Վանա 3) Սևանա

63 ՀՀ տրված բնակավայրերի համարները դասավորել ըստ արևոտ օրերի թվի աճման կարգով.

1) Մարտունի 2) Իջևան 3) Գյումրի

(64-65) Քաղաքի բնակչության թիվը 40 000 է, բնակչության բացարձակ մեխանիկական աճը՝ 800 մարդ: Ծնվածների թիվը 3000 մարդ է, մահացածների թիվը՝ 1500 մարդ:

64 Որոշել բնակչության բացարձակ բնական աճը:

65 Որոշել քաղաքի բնակչության թիվը մեկ տարի հետո:

66 Օդի բացարձակ խոնավությունը 10գ/մ³ է, հարաբերական խոնավությունը՝ 40%: Որոշել հագեցման համար անհրաժեշտ ջրային գոլորշիների քանակը:

67 **Վայրի աշխարհագրական կոորդինատներն են՝ հվ. լ. 38°, արլ. ե. 147°: Որոշել տվյալ վայրի ժամային գոտին:**

68 **Որքա՞ն մակերես կզբաղեցնի Չինաստանը (9,6 մլն կմ²) 1 : 40 000 000 մասշտաբի քարտեզում:**

69 **Հյուսիսային Ամերիկայի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.**

1) Լաբրադոր թերակղզում տունդրայի զոնայի հարավային սահմանը Ալյասկայի համեմատ ձգվում է բավականին հյուսիս:
2) Ամենաքիչ տեղումները դիտվում են Մեծ Ավազան սարահարթի գոգավորություններում:
3) Հյուսիսամերիկյան պլատֆորմի բյուրեղացած հիմքի մերկացած տեղամասերում առաջացել է Կոորդիլիերների լեռնային համակարգը:
4) Կլիմայի ձևավորման ամենամեծ ազդեցություն ունի Խաղաղ օվկիանոսը:
5) Ատլանտյան օվկիանոսի Լաբրադորյան և Խաղաղ օվկիանոսի Կալիֆոռնիական սառը ծովային հոսանքներն առափնյա շրջաններում առաջացնում են կլիմայի չորություն և օդի ջերմաստիճանի նվազում:
6) Հյուսիսային մասի մակերևույթի ձևավորման վրա մեծ ազդեցություն են թողել սառցադաշտերը:

70 **ՀՀ Տավուշի մարզի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.**

1) Կլիման առավելապես չորային և խիտ ցամաքային է:
2) Թեթև արդյունաբերության առաջատար ենթաճյուղը գորգագործությունն է:
3) Հարավից դեպի հյուսիս շարժվելիս մակերևույթը աստիճանաբար բարձրանում է:
4) Գետերը պատկանում են առավելապես Արաքսի ավազանին:
5) ՀՀ միակ մարզն է, որը սահմանակից է թե՛ Վրաստանին, թե՛ Ադրբեջանին:
6) Հովտային շրջաններում լայն տարածում ունեն սողանքները: